ԾՐԱԳԻՐ

«Սփյուռքահայ գրականություն, ասմունքի և խոսքի զարգացում» ուսումնական խմբակի

Նպատակը՝

1. Ուսումնասիրել սփյուռքահայ գրականության նվաճումները՝ առանձնացնելով ստեղծման նախապայմանները և զարգացման փուլերը:
2. Ծանոթացնել սովորողներին սփյուռքահայ հեղինակների գրական ժառանգությանը:
3. Ներկայացնել այն շարժառիթները, որոնց հիման վրա կամ անմիջական ազդեցությամբ գրվել են խմբակի ծրագրում ներառված ստեղծագործությունները:
4. Ստեղծել միջառարկայական կապ աշխարհագրություն առարկայի հետ, սովորողներին ծանոթացնել այն երկրներին, որտեղ ապրել և ստեղծագործել են սփյուռքահայ գրողները:
5. Տանել համեմատականներ սփյուռքահայ, արևելահայ և արևմտահայ գրողների ստեղծագործությունների միջև. անդրադառնալ ժանրային առանձնահատկություններին:
6. Ասմունքի միջոցով սովորողներին ծանոթացնել տարբեր հեղինակների այն ստեղծագործություններին, որոնք ներառված չեն դպրոցական դասագրքերում:
7. Կունենաք ասմունքողներ, ովքեր կընդգրկվեն դպրոցական, միջդպրոցական և համայնքային տարբեր միջոցառումներում:

Խնդիրները՝

1. Նորովի քննել սփյուռքահայ գրողների ստեղծագործություններում արծարծված հարցերը:
2. Ներկայացնել այն ժամանակաշրջանն ու միջավայրը, որտեղ ապրել և ստեղծագործել են սփյուռքահայ հեղինակները:
3. Ցույց տալ այն կարևոր հանգամանքները, թե ինչու է անհրաժեշտ իմանալ և ճանաչել սփյուռքահայ գրողներին և նրանց ստեղծագործությունները:
4. Սովորողներին ներկայացնել սփյուռքահայ գրողների կենսագրական առավել ուշագրավ փաստերը:
5. Ուշադրություն դարձնել արևմտահայերենի ճիշտ հնչերանգի պահպանմանը և սահուն ընթերցանությանը:
6. Ընտրել տարբեր հեղինակների ստեղծագործություններ և աշխատանքներ տանել սովորողների ասմունքի հմտությունների զարգմացման ուղղությամբ:
7. Կիրառել ժամանակակից մեթոդներ՝ ուսուցումն ավելի արդյունավետ դարձնելու համար, տեսանյութերի միջոցով լսել ստեղծագործությունների արտասանությունների տարբեր եղանակներ:
8. Կազմակերպել միջոցառումներ, որոնց միջոցով սովորողները հնարավորություն կունենան ներկայացնել իրենց ստացած գիտելիքները:

Ակնկալվող վերջնարդյունքները

Խմբակի վերջում մենք ունենալու ենք հետևյալ ակնկալվող վերջնարդյունքները: Ըստ սովորողների ունեցած ընդունակությունների՝ խմբակի գործունեության շրջանակում նրանք տարբեր գիտելիքներ ձեռք կբերեն: Կծանոթանան սփյուռքահայ գրողներին և նրանց թողած գրական հարուստ ժառանգությանը: Ընտրված ստեղծագործությունների միջոցով նոր գիտելիքներ կունենան այն միջավայրի և ժամանակաժրջանի մասին, որոնք նկարագրված են սփյուռքահայ գրողների կողմից, միասին ցույց կտանք տվյալ ստեղծագործությունների արդիականությունը: Կսովորենք գրական վերլուծության ենթարկել այդ ստեղծագործությունները, միջառարկայական կապերի շնորհիվ լրացուցիչ տեղեկություններ կունենանք: Սովորողները կիմանան բանաստեղծությունների ճիշտ արտասանության նրբությունները, կկարողանան ավելի սահուն ընթերցել արձակ ստեղծագործությունները: Խմբակի գործունեության ընթացքում սովորողները գիտելիքներ, հմտություններ և կարողություններ ձեռք կբերեն, որոնք կարող են նրանց մասնագիտության ընտրության հարցում որոշիչ լինել կամ պետք գալ այլ ոլորտներում:

Շաբաթական ժամաքանակ՝ 3 ժամ, ընդհանուր ժամաքանակ՝ 102:

Խմբակի բովանդակություն

Խմբակի գործունեությունն ուղղված է սովորողների գիտելիքների և հմտությունների ավելացմանը: Այն հնարավորություն կտա սովորողներին ուսումնասիրել այնպիսի ստեղծագործություններ, որոնք ընդգրկված չեն դպրոցական դասագրքերում, բացի այդ, կունենաք ասմունքին և խոսքի զարգացմանը նվիրված հատուկ ժամեր: Նշենք, որ խմբակի գործունեությունը հիմնված է լինելու ժամանակակից, փոխներգործուն մեթոդների վրա: Ստեղծագործությունների վերլուծությունների, քննարկումների շնորհիվ զարգացնելու ենք սովորողների քննադատական մտածողությունը:

Քանի որ խմբակը գործելու է շաբաթական 3 ժամով, մենք կատարել ենք հետևյալ բաշխումը: Երկու ժամ նվիրված է լինելու սփյուռքահայ գրականությանը, իսկ երրորդ ժամն ուղղված է լիելու ասմունքին և խոսքի զարգացմանը: Խմբակի պարապմունքների ընթացքում կանցկացվեն ընթերցանություններ, կկազմակերպվեն դերային խաղեր, բանավեճ-քննարկումներ: Կդիտենք ընտրված թեմաներին վերաբերող տեսանյութեր, կլսենք այնպիսի երգեր, որոնք գրված կլինեն մեր անցնելիք ստեղծագործությունների հիման վրա: Նախատեսվող միջոցառումների իրականացումը կներկայացնի խմբակի ողջ աշխատանքը, մեր ունեցած ձեռքբերումները:

Սփյուռքահայ գրականություն

ՀԵՂԻՆԱԿ	ԹԵՄԱ	ԺԱՄ	ՆՊԱՏԱԿ
1. Սփյուռքահայ հեղինակներ	Սփյուռքահայ գրականության առաջացման պատճառները, տարածումը և զարգացումը	1 ժամ	Ծանոթացնել սովորողներին սփյուռքահայ գրականության առաջացման նախադրյալներին:
	Արևմտահայերենի ուսուցում	3 ժամ	Ծանոթացնել սովորոներին արևմտահայերենի արատասանական և լեզվական կանոններին:
2. Վահան Թեքեյան	Երեք ձոն («Աստուծոյ», «Հայ ազգին», «Ընթերցողին» «Տաղ հայերէն լեզուին», «Կանձրեւէ, տղա՛ս»), «Հայու հոգին», «Լոիսաւորչի կանթեղը», «Քու յիշատակդ այս գիշեր»	5 ժամ	Սովորողներին ծանոթացնել Վահան Թեքեյանի գրական հարուստ ժառանգությանը:
3. Հակոբ Օշական	«Առաջին արցունքը», «Թիւրքմէնին աղջիկը», «Մատմազէլ Եւա», «Գոլօ», «Պաղտօ»	5 ժամ	Ցույց տալ Օշականի ստեղծագործությունների առանձնահատկություններն ու թեմաների արդիականությունը:
4. Կոստան Զարյան	«Տատրագոմի հարսը»	2 ժամ	Սովորողների մոտ զարգացնել քննադատական մտածողություն:
5. Հակոբ Մնձուրի	«Սիլա», «Ոսկիները», «Մեր մայրերը», «Տյուկե մամուն եզը»	4 ժամ	Ներկայացնել արևմտահայ միջավայրը՝ ընդգծելով բարքային արժեքները:
6. Համաստեղ	«Փիլիկ աղբար», «Տափան մարգար», «Զոհը կար Ամուն էր», «Համբույր», «Անձրև», «Միջոն»	5 ժամ	Քննել կերպարների հոգեբանական զարգացումը:
7. Վազգեն Շուշանյան	«Ճերմակ Վարսենիկ», «Սիրո և արկածի տղաքը»	4 ժամ	Վազգեն Շուշանյանի ստեղծագործություններում բացահայտել զգացումի խնդիրը:
8. Շահան Շահնուր	«Առավոտյան շեփոր», «Պճեղ մը անուշ սիրտ»	3 ժամ	Քննել նկարագրվող ժամանակաշրջանն ու այն միջավայրը, որտեղ կատարվում են դեպքերը:
9. Մուշեղ Իշխան	«Հայ լեզուն տունն է հայուն», «Տան սեր», «Հայ մամիկին աղոթքը», «Մարդ արարած», «Իզուր», «Նույնն է ճամփան»	5 ժամ	Սովորողներին ծանոթացնել Մուշեղ Իշխանի բանաստեղծական աշխարհին և դրանցում արծարծված թեմաներին:
10. Զահրատ	«Այսպես ամեն առավոտ», «Չար բաներ»	3 ժամ	Անձի ինքնության բացահայտումը Զահրատի ստեղծագործություններում:
11. Զարեհ Խրախունի	«Հոգեհանգիստ», «Լեռն ի վեր», «Դաշտը անտեր»	3 ժամ	Սիմվոլիստական պատկերների բացահայտումը Խրախունու ստեղծագործություններում:

Ասմունք և խոսքի զարգացում

ՀԵՂԻՆԱԿ	ԹԵՄԱ	ԺԱՄ	ՆՊԱՏԱԿ
1. Նար-Դոս	«Պայքար», «Աննա Սարոյան»	4 ժամ	Ընթերցանության միջոցով ցույց տալ կերպարների հոգեբանական վերլուծությունները Նար-Դոսի ստեղծագործություններում:
2. Հովհաննես Թումանյան	«Իմ հայրենիքը տեսե՞լ ես,ասա», «Հայրենիքիս հետ», «Նախերգանք», «Մանկություն», «Ժպտուն աչքեր», «Իմ սերը», քառյակներ	4 ժամ	Արտահայտիչ խոսքի միջոցով ընդգծել Հ. Թումանյանի բանաստեղծությունների արժեքայնությունը:
3. Ավետիք Իսահակյան	«Ծաղիկ էի նորաբողբոջ», «Կուզե՞ս լինիմ վշտի ցողեր», «Շատ մի տխրիր, շատ մի խնդա, սիրելիս», «Հայրենիքես հեռացել եմ», «Էյ ջան հայրենիք, ինչքան սիրուն ես»	4 ժամ	Ասմունքի միջոցով ցույց տալ Իսահակյանի ստեղծագործությունների գեղարվեստականությունը:
4. Վահան Տերյան	«Հրաշք աղջիկ», «Իջնում է գիշերն անգութ ու մթին», «Ես սիրում եմ քո մեղավոր աչքերը խոր», «Էստոնական երգ», «Ի՞նչ մնաց ինձ», «Այնպես անխինդ են և նըման լացին»	3 ժամ	Սիմվոլիզմի գաղափարի վերհանումը ասմունքի միջոցով:
5. Ավետիս Ահարոնյան	«Կաթուշք», «Ղեղոյի արտը», «Փշուր ըմ խա՛ց», «Պուտ մը կա՛թ»	4 ժամ	Արտահայտիչ ընթերցանության միջոցով վեր հանել ժամանակաշրջանի սոցիալական խնդիրները:
6. Դանիել Վարուժան	«Վաղվան բողբոջներ», «Կակաչներ», «Հասուն արտ», «Հունձք կը ժողվեմ», «Անդաստան»	3 ժամ	Ցույց տալ արևմտահայերենի ճիշտ արտասանությունը ասմունքի միջոցով:
7. Սիամանթո	«Ափ մը մոխիր հայրենի տուն», «Թթենի», «Գյուտին փառքը», «Դարերու վրեժը»	4 ժամ	Ցույց տալ արևմտահայերենի ճիշտ արտասանությունը ասմունքի միջոցով:
8. Մուրացան	«Նոյի ագռավ», «Խորհրդավոր միանձնուհի», «Տիկին փիլարյանի վիշտը», «Ռուզան»	3 ժամ	Արտահայտիչ ընթերցանության միջոցով ցույց տալ մարդկային հոգեբանության առանցքային կողմերը:
9. Եղիշե Չարենց	«Խավար է, գիշեր է», «Հեռացումի խոսքեր», «Ո՞վ	4 ժամ	Ասմունքի իջոցով վեր հանել բանաստեղծի

	կիանդիպի, ո՞վ կբարևի», «Գիշերը ամբողջ», «Լուսամփոփի՛ պես աղջիկ», «Առավոտ», «Սոնետ», «Խմբապետ Շավարշը» (հավտվածներ)		ստեղծագործություններում ներկայացված արժեքային համակարգը՝ որպես ԵՍ-ի ձևավորման միջոց:
10. Գրիգոր Զոհրապ	«Ռեհան», «Փոստալ», «Ճոկո»	3 ժամ	Ընթերցանության միջոցով ծանոթանալ Զոհրապի նովելների լեզվաոճական առանձնահատկություններին:
11. Համո Սահյան	«Ինչ արած, մարդ եմ», «Կգամ», «Կա մի թուլություն», «Չես ասի ոչ մի բառով», «Հոգնել եմ», «Բայց ուր տանի», «Դու ուզեցիր»	4 ժամ	Ասմունքի միջոցով բացահայտել Սահյանի քնարերգության յուրահատկությունները:
12. Հովհաննես Շիրազ	«Վերելք», «Համամարդկային», «Հրաշք», «Հին աշխարհը չեմ տեսել», «Երկնքի սպիտակ, սպիտակ շուշաններ», «Իմ սուրբ հայրենիք»	4 ժամ	Ասմունքի միջոցով ցույց տալ հեղինակի հույզերի և իրականության կապը:
13. Վահագն Դավթյան	«Հայաստան», «Երգն Հայաստանի», «Երկիր, քարի մոլուցք», «Այնտեղ»	2 ժամ	Ասմունքի կիջոցով ծանոթանալ Վահագն Դավթյանի գրական ժառանգությանը:
14. Պարույր Սևակ	«Գիշերն ու ես», «Մենք իրար ձեռք չսեղմեցինք», «Եկ հպարտ մնանք», «Մի պահ զղջում եմ», «Հայաստան»	4 ժամ	Ասմունքի միջոցով ընդգծել գերմարդու խնդիրը Սևակի բանաստեղծություններում:
15. Վարդգես Պետրոսյան	«Ապրած և չապրած տարիներ», «Մենավոր ընկուզենի»	5 ժամ	Ընթերցանության միջոցով վեր հանել պետրոսյանական կերպարների խորությունն ու խոսքի յուրահատկությունը:
16. Հրանտ Մաթևոսյան	«Ծառեր», «Ալխոն», «Խոտհունձ», «Մենք ենք, մեր սարերը»	4 ժամ	Խոսքի զարգացման շրջանակում ընթերցանության միջոցով ցույց տալ ժամանակի սոցիալական հարցերի քննումը Մաթևոսյանի ստեղծագործություններում: